մոռացութեան տալու համար փախչում էր դէպի սարերը, դաշտերը, անտառները, — առանձնութիւն եւ ամայութիւն էր որոնում:

Ես նրանից չէի հարցնում պատճառը, որովհետեւ գիտէի նրա բնաւորութիւնը, մի բան որ նա ինքը յայտնել չէր ուզում, եթէ հարցնէիր, իսկոյն կը սկսէր բարկանալ: Ես հարցրի Ասլանից: Նա Ասլանին ինձանից աւելի խելացի էր համարում եւ շատ բաների մէջ նրա հետ խորհուրդ էր անում: Բայց Ասլանի հաղորդած տեղեկութիւնները այնքան մթին էին, որ կարօտ էին առանձին բացատրութեան:

— Ես էլ չգիտեմ, — ասաց Ասլանը, — թէ ինչ սատանայ է մտել նրա սրտի մէջ. սիրահարուած լինել նա չէր կարող, որովհետեւ այդ հասակում սէրը ջահիլ տղին չէ գժուացնում:

Յետոյ նա պատմեց, թէ սուրբ Յովհաննու մատուռի տօնախմբութեան օրը (մի ամիս անցել էր այն օրից) Կարօն էլ ուխտաւորների թւումն էր: Այնտեղ հաւաքուել էին Սալմաստայ ամբողջ գաւառից ոչ միայն հայեր, այլ բազմաթիւ օտարազգիներ եւս: Տօների սովորական հանդէսների համեմատ կատարուեցան զանազան խաղեր: Բոլոր մրցութիւնների մէջ, որ տղամարդիկ իրանց շնորհքը ցոյց տալու համար կատարում են այս տեսակ հանդէսներում, Կարօն նշանաւոր գտնուեցաւ: Ձիարշաւների մէջ նա բոլորին յաղթեց. ըմբիշների մէջ իր հասակակիցներից մէկը չգտնուեցաւ, որ նրա կողքը գետնին խփէր. մուշտեկռիւի մէջ բոլորը փախչում էին նրա առջեւից. վազ տալու մէջ նա եղջերուից աւելի արագավազ էր, մի խօսքով, բոլոր խաղերի մէջ նա ցոյց տուեց զարմանալի ճարպկութիւններ: Կարօյի այդ արիութիւնները նրա վրայ դարձրին հանդիսականներից մէկի, որսորդ Աւօյի ուշադրութիւնը, որ համբուրեց նրա ճակատը եւ հրաւիրեց իր մօտ ճաշ ուտելու: Այնտեղ հաւաքուած էին մի քանի անծանօթ, կասկածաւոր մարդիկ: Կարօն նրանց մէջ չափազանց ուրախ էր, անդադար երգում էր, մինչեւ անգամ պար էր գալիս: Նա մնաց որսորդի մօտ ամբողջ գիշերը, բոլորովին մոռանալով Ասլանին, որի հետ միասին սուրբ Յովհաննէս ուխտ էին գնացած: — Ահա բոլորը, ինչ որ կարողացաւ հաղորդել ինձ Ասլանը եւ աւելացրեց.

— Այն օրից, երբ Կարօն յարաբերութիւններ սկսեց որսորդի հետ, նրա մէջ նկատւում են շատ փոփոխութիւններ:

— Երկա՞ր ժամանակ է, որ նա ծանօթութիւն ունի որսորդի հետ, — հարցրի ես:

— Դպրոցը թողնելուց յետոյ, — պատասխանեց Ասլանը, — եւ այդ ծանօթութիւնը բոլորովին խելքից հանեց Կարօյին: